

S.V. HAMBARDZUMYAN

THE USE OF FOREIGN WORDS IN HOVHANNES SHIRAZ'S POEM
"ARMENIAN DANTEIDA"

The word formation principles of foreign-words used in H. Shiraz's poem "Armenian Danteida" are considered, their stylistic, expressive shades are shown.

Keywords: Hovhannes Shiraz's poem "Armenian Danteida", the use of foreign words, simple words, words with functional and stylistic coloring, thematic groups of words, true foreign words, word formation of new components of foreign words, stylization of the author's artistic speech.

ՀՏԴ 82-94:821.19

Մ.Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԻՋԲԸ

20-րդ դարի հայ հուշագրությունը, ազգային ճակատագրի բերմամբ, շարունակողը լինելով 5-րդ դարից սկիզբ առնող ավանդների և տեղավորվելով համաշխարհային հուշագրության զարգացման միտումների ծիրում, միևնույն ժամանակ ստացավ զուտ ազգային մի այնպիսի երանգ, որ հատուկ չէ այլ ազգերի հուշագրություններին: Ունենալով հանդերձ միասնական ներքին անքակտելի տրամաբանություն՝ տարբերակվեց խորհրդահայի և սփյուռքահայի:

Առանցքային բաներ. հուշագրություն, վտարանդի, սփյուռքահայ, խորհրդահայ, ազգային մշակույթ:

Ներածություն: Ի տարբերություն ռուսական վտարանդիության, որ առաջին փուլում (1918-1940թթ.) երկու միլիոնից ավելի էր և կենտրոնացել էր հատկապես եվրոպական խոշոր քաղաքներում և ռուսական Խարբինում [1], հայ իրականության մեջ հանգամանքները միանգամայն այլ էին: Նախ՝ հայությունը հարյուրամյակներից ի վեր արդեն իսկ սփռված էր աշխարհով մեկ և ստեղծվել էին մշտապես ուժացվող հայկական գաղթօջախներ [2]: Լայն առումով՝ գաղթահայության երևույթը հայ գրականության մեջ դրսևորվել էր դեռևս միջնադարից եկող պանդխտության երգերի տեսքով: Երկրորդ՝ Մեծ եղեռնից հետո արևմտահայ վերապրածների մի զգալի զանգված ևս հայտնվեց պատմական հայրենիքից հեռու, և դա ամենևին կապ չունեի քաղաքական դրդապատճառներով արտասահմանում հանգրվանելու՝ վտարանդիության հետ, ինչպիսին ռուսական և ուկրաինական, նաև՝ Ռուսական կայսրության այլ ժողովուրդների քաղաքական էմիգրանտներն էին, որոնք ստեղծեցին իրենց ուրույն գրականությունները: Հայկականի պարագայում, փոքր վերապահությամբ, չէր կարող լինել վտարանդիա-

կան գրականություն. այն ի սկզբանե պետք է խմորվեր և կայանար իբրև սփյուռքահայ գրականություն:

Պատճառների պատմականության հանգամանքը: Օսմանյան կայսրության տարածքից (Մերձավոր Արևելք, Հյուսիսային Աֆրիկա) հեռացած հայությունը պատմականորեն ձևավորված ավանդույթով մաս էր կազմում արևմտահայ ընդհանուր մշակութային արեալի, իսկ Ռուսական կայսրության տարածքի (Կովկաս, Ղրիմ, Բեսարաբիա), ինչպես նաև Իրանի և այդտեղից հեռացած հայությունը մաս էր կազմում արևելահայ մշակութային արեալի: Պատճառը միանգամայն պարզ է. Մերձավոր Արևելքն ինքը երբեմնի մասն էր Օսմանյան կայսրության, որի կազմում էր Արևմտյան Հայաստանը, իսկ Կովկասը, Նախակովկասը, Ղրիմը Ռուսական կայսրության մեջ էին, որի մաս էր կազմում Պատմական հայրենիքի արևելահայկական հատվածը (Այրարատը, Սյունիքը, Արցախը, Ուտիքը): Այսպես, միևնույն ժամանակում՝ 19-20-րդ դարազլխին, ասենք, Եվրոպայում ուսանող հայ երիտասարդները ստեղծագործում էին յուրաքանչյուրն իր արեալի լեզվով և ավանդույթներով (օրինակ՝ Վարուժանը՝ արևմտահայերեն, Իսահակյանը՝ արևելահայերեն): Սրանով հանդերձ՝ մինչև Հայոց ցեղասպանությունը դրանք անջրպետված չէին: Մի կողմից՝ Հայ եկեղեցու հանգամանքն էր միասնական պահում հայ մշակույթը (կրոնավորների փոխադարձ ձեռնադրումներից ու գործուղումներից, աշխարհասփյուռ հայկական դպրոցների ուսուցչական միասնական ցանցի գործարկումից ու առանց խտրականության՝ բոլոր հայաբնակ գավառների աշակերտների կրթության գործից մինչև կաթողիկոսների ընտրություն)՝ թույլ չտալով, որ տարբերությունների շարքը հատեր կրիտիկական զանգվածի ու խորթանալու շեմը, երբ ազգային ինքնանույնականացումը փոխվում է, մյուս կողմից՝ 19-րդ դարի երկրորդ կեսից ասպարեզ իջած հայրենասիրական խմբերն ու կուսակցություններն էին կատարում լայն առումով մշակութային և քաղաքական միասնական գիտակցման մերանի դեր:

Սա ամենևին չի նշանակում, թե գրապայքարի մեկ ուրիշ մակարդակ չկար 20-րդ դարի հայ գրականության սկզբնավորման փուլում: Դա պայմանավորված էր մի կողմից՝ արևելահայ և արևմտահայ գրականությունների փիլիսոփայական, աշխարհայեցողական, գեղագիտական ազդեցության աղբյուրներով (միջնորդավորված ռուսական և անմիջականորեն եվրոպական), մյուս կողմից՝ արևելահայ և արևմտահայ միջավայրերից բխող ազգային երազանքի իրականացման տարբեր եղանակների պատկերացումներով: Ռուսականի միջոցով եվրոպականին հաղորդակցված և այդ եվրոպականով հայ գրականության թարմացման գործին հաջողությամբ լծված մինչև իսկ Տերյանը չափազանցնելով գրում է. «Թումանյանի մի «Փարվանան» ես չեմ փոխի պոլսահայ բոլոր հանկարծակի հեթանոսացած պոետների արտադրությանց հետ» [3]:

Թեև ազգային մշակույթի միասնականության գիտակցման աստիճանը բարձր էր և ուներ պատմականորեն ձևավորված խորքային ամրություն, սակայն կային նաև օբյեկտիվ իրականությունից բխող տարբերություններ, որոնք որոշիչ գործոններ էին: «Մշակույթն ունի վերսալ համակարգ է, որը լիարժեք կարող է գործել միայն այն կենսատարածքում, որտեղ ծագել և զարգացել է: Կենսատարածքից դուրս կամ կենսատարածքի արմատական փոփոխության դեպքում ընդոծին (էնդեմիկական) մշակույթը դեգեներացվում է, այլասերվում կամ հիմնավորապես փոխվում նոր մշակույթի, որի միջնաշերտերում նախամշակույթն ընդամենը թույլ նշմարվում է» [4]: Անշուշտ, հայ գրականության պարագայում խոսք լինել է չի կարող «թույլ նշմարման» մասին, քանի որ հազարամյա միաձուլությունն ու ոչ վաղ անցյալի ճակատագրի շոկային ընդհանրությունը նույնականության ամուր հող էին, սակայն արևելահայ-արևմտահայի ոչ էական տարբերությունների սաղմերը խորհրդահայ-սփյուռքահայ դառնալիս օրինաչափորեն պետք է սկսեին է՛լ ավելի խորանալ:

Արևելահայ և արևմտահայ գրականությունների տարբերության հայտանիշերը երեքն էին՝ ա) լեզվական մակարդակ (արևելահայերեն և արևմտահայերեն), բ) ազդեցությունների խողովակների մակարդակ (արևմտահայ գրականության վրա ուղղակի էր եվրոպական չմիջնորդավորված ազդեցությունը, իսկ արևելահայ գրականության վրա ռուսականը և ռուսականի միջոցով՝ եվրոպականը), գ) միջավայրային հանգամանքի մակարդակ (արևմտահայ գրականության կենտրոնն Կ.Պոլիսը արևելքաբար էր եվրոպականացված, և արևմտահայությունն օրինաչափորեն ապրում էր թյուրքական-մահմեդական մշակութային հեգեմոնիայի միջավայրում, իսկ արևելահայ գրականության կենտրոնն Թիֆլիսը ռուսաբար էր եվրոպականացված, և արևելահայությունն օրինաչափորեն ապրում էր ռուսական-ուղղափառ մշակութային հեգեմոնիայի միջավայրում): Երկու դեպքում էլ հայ գրականության հիմնական կենտրոնները պատմական հայրենիքի տարածքում չէին (Կ.Պոլիս և Թիֆլիս), երկու դեպքում էլ հայ գրականությունը դատապարտված էր կայանալու ոչ սեփական պետականության պայմաններում՝ օտար մշակույթների հզոր հոսքերի ազդեցության պայմաններում:

Այսու՝ ի տարբերություն Ռուսական կայսրության այլ ժողովուրդների, որոնք ունեցան քաղաքական վտարանդիների արտասահմանյան գրականություն, հայ գրականության մեջ վտարանդիների ինքնօրինակ հայ գրականության հանգամանքն ի սկզբանե բացառված էր, քանի որ՝ ա) վտարանդի հայ գրողները 1921թ.-ից հանգրվանեցին իրենց ոչ խորթ, այլ արդեն սեփական մշակութային ավանդները ստեղծած հայկական հարազատ գաղթօջախներում (մերձավոր-արևելյան, եվրոպական, ամերիկյան երկրներ և Իրան) և նույնիսկ դժվարություն

չունեցան արևելահայերենից արևմտահայերենի (կամ հակառակի) անցման, բ) լծվեցին ոչ թե նոր սկսելու գրականությամբ և մամուլով ազգապահպանման խնդրի լուծմանը, այլ ներգավվեցին ու նոր թափ հաղորդեցին արդեն սկսվածին, գ) հայ գրողների համար հայրենիքը ոչ միայն խորհրդայնացված տարածքն էր, այլև, առաջին հերթին, հայաթափված Արևմտյան Հայաստանը, այսինքն՝ նրանց հանգամանքը երկրորդ հերթին էր քաղաքական, իսկ առաջին հերթին հայապահպանությունն ու պահանջատիրությունն էին:

Պատճառների ազգային հանգամանքը: Բացի այդ, առկա էր զուտ ազգային հանգամանք ևս: Խորհրդային Հայաստանի գրողների մեծ մասի ծննդավայրը մնացել էր սահմանից այն կողմ ճիշտ այնպես, ինչպես սփյուռքում հայտնված տարագիր և վտարանդի հայ գրողներինը, այսինքն՝ նրանք կապված էին նաև վտարված՝ վտարանդի (բառի ոչ ռուսական ընկալմամբ, այլ օտարի՛ց պարտված ու գաղթած իմաստով) լինելու հանգամանքով: Նրանց բոլորին կապում էին կարոտի և վերադարձի հույզը և գաղափարը: Մինչդեռ այդ կարոտի և վերադարձի հույզն ու գաղափարը այլազգի վտարանդի գրողներին էր միայն հատուկ և ոչ քաղաքական համակարգը փոխած կամ բռնազավթված հայրենիքում մնացած գրողներին: Հնուց անտի (դեռևս հին հունական գրականության մեջ) «վտարանդու բնօրրանն անխուսափելիորեն կապվել է հայրենիքից բաժանվելուց առաջացած հոգեկան վնասվածքի մասին պատկերացումների, կարոտի, հիշողության առանձնահատուկ դերի, դեպի անցյալն ուղղված հայացքի և վերադարձի երազանքի հետ»[5]: Այսպիսով, մի կողմից՝ հայ գրականության մանավանդ սփյուռքյան հատվածն է «վտարանդիական», մյուս կողմից՝ հայ գրականությունը ոչ միայն Խորհրդային Հայաստանում, այլև սփյուռքում վերապահությամբ է հնարավոր տեղավորել վտարանդիական գրականության սահմաններում՝ ելնելով ազգային վերոնշյալ պատմական ճակատագրից ու դրանով պայմանավորված առանձնահատկությունից: Խորքային առումով էական տարբերություն չէր կարող լինել, ասենք, Վանից Երևան և Վանից Փարիզ վտարված, հայրենազրկված հուշագրողների կարոտների, զգացողությունների, երազանքների միջև:

Պատմական և ազգային հանգամանքները հուշագրության պարագայում: Եթե այս նուրբ և բնորոշիչ առանձնահատկությունները վերաբերում են 20-րդ դարի առհասարակ հայ գեղարվեստական գրականությանը, ապա առավել հատուկ են հուշագրությանը, որտեղ ավելի քան շեշտված են վերոնշյալ «հիշողության առանձնահատուկ դերը, դեպի անցյալն ուղղված հայացքն ու վերադարձի երազանքը»: Հատուկենտ հայ գրողներ միայն վտարանդվեցին, որոնցից ոմանք տարբեր տարիների վերադարձան Խորհրդային Հայաստան (Լեռ Կամսար, Ավետիք Իսահակյան, Կոստան Զարյան և այլք): Բառի քաղաքական իմաստով՝

վտարանդիների մեծ մասը հայ քաղաքական, պետական և ռազմական գործիչներ էին, մասնավորապես դաշնակցականներ: Այսու՝ միանգամայն օրինաչափ է, որ վտարանդի հայ գրողների գրականության փաստը մեծ վերապահությամբ պետք է ընդունել որպես ուրույն՝ վտարանդիական որակ. այն մաս կազմեց և ընդամենը երանգ դարձավ նոր ձևավորվող սփյուռքահայ գրականության:

Վտարանդի քաղաքական, պետական և ռազմական գործիչները (Ալեքսանդր Խատիսյան, Սիմոն Վրացյան, Ռուբեն Տեր-Մինասյան և այլք), չնչին բացառությամբ (Հովհաննես Քաջազնունի, Մախլուտո և այլք), մինչև իրենց կյանքի վերջը մնացին տարագրության մեջ և այնտեղ գրեցին հուշագրություններ: Դրանք հիմնականում ունեն աղբյուրագիտական արժեք և հետաքրքիր են հատկապես պատմագիտության համար, բայց նաև որոշակի արժեք են ներկայացնում գրականության պատմության տեսանկյունից այնքանով, որքանով պարունակում են նաև հայ գրողների ու գրական ընթացքի մասին հիշատակումներ:

20-րդ դարի սփյուռքահայ և խորհրդահայ հուշագրությունները մի կողմից՝ ժառանգորդն էին 5-րդ դարից սկիզբ առնող հուշագրականության ավանդների և մոտեցումների, մյուս կողմից՝ 19-րդ դարակեսից արդեն պայմանականորեն տարանջատվող արևելահայ և արևմտահայ գրականությունների ներքին տրամաբանության կրողն էին:

Արևելահայ հուշագրությունը զուտ ձևական առումով ընդհատում չունեցավ. արևելահայ հատվածի կյանքը չընդհատվեց Մեծ եղեռնով ու հայրենագրկմամբ: Արևմտահայ հուշագրությունն ընդհատվեց ու ինքզինքը գտավ արդեն միանգամայն այլ միջավայրում ու փորձեց ընձյուղվել այդ նոր միջավայրի հրամայականներից, ինչպես ամբողջ սփյուռքահայ գրականությունը: Արևելահայ հուշագրությունը ստիպված տեղավորվեց խորհրդային գաղափարախոսականացված և միակուսակցականացված ամբողջատիրության կոպիտ պահանջների շրջանակում, իսկ արևմտահայ հուշագրությունը թեև ազատ էր նման պահանջների պարտադրանքներից, սակայն չունեց տարածական միասնականության և գոնե փոքր-ինչ կանոնակարգող մտավոր միասնական կենտրոն ունենալու պատեհությունը, ինչպիսին ուներ մինչեղեռնյան պոլսական շրջանում: Արևմտահայ հուշագրության ակունքներից խորքայինը՝ անգիտակցականից բխող, կարոտն էր, որ նույնական էր սփյուռքահայ կարոտի գրականության հետ: Ըստ էության, 1921 թվականից արևելահայ և արևմտահայ հուշագրությունները ստիպվեցին ինչ-որ առումով սկսել թեկուզ ոչ բացարձակ, բայց, այնուամենայնիվ, հարաբերական զրոյից, մեկը՝ քաղաքական համակարգի փակ ու ամբողջատիրական հենքի վրա, մյուսը՝ բուն կտրվածի առանձին ճյուղերով ընձյուղվելու ճիգից:

Այս հանգամանքներն էին, որ լրջորեն տարբերակեցին 20-րդ դարի խորհրդահայ և սփյուռքահայ հուշագրությունները: Միևնույն ժամանակ, որքան

էլ հարաբերականորեն տարբեր սկիզբներով, այնուամենայնիվ, ներքին անտեսանելի նույնություն կա խորհրդահայ և սփյուռքահայ հուշագրությունների դեպքում: Եվ առաջին հերթին այդ նույնությունը լեզուն է, թեկուզև գրական առանձին տարբերակներով: Երկուսն էլ ամենախորքում սկիզբ առան հայ հուշագրական ավելի քան հազարամյա կողից, թեև արևելահայ (խորհրդահայ) հուշագրությունն այդ ընդհանուրին խառնել էր ռուսական մշակութային ազդեցությունը, իսկ արևմտահայը (սփյուռքահայ)՝ եվրոպական և իսլամական:

Տարբերություններով լի սկզբի այսպիսի գեներալիսի պարագայում 20-րդ դարի հայ հուշագրությունը նույնն էր ամենից առաջ անգիտակցականի մակարդակում, որ արտահայտվում էր կորցնողի, հայրենագրկվածի, կարոտողի հոգեբանությամբ: Այդ անշրջանցելի գիտակցական մակարդակում թեև փորձվեց շրջանցվել խորհրդահայ շատ հուշագրություններում, սակայն նույնիսկ ամենից կոմունիստական, ամենից խորհրդային հուշագրողներին անգամ չհաջողվեց կտրվել ազգային էության այդ ակունքից:

Եզրակացություն: 20-րդ դարի հայ հուշագրությունը համաշխարհային հուշագրության հարազատ մասն է՝ իր վերելքների և վայրէջքների շրջաններով, թեմաներով և թեմատիկայով, բայց, պայմանավորված ոչ միայն 1500-ամյա գրավոր ժառանգության ազգային ավանդներով ու աշխարհըմբռնման ինքնօրինակությամբ, 19-րդ դարից եկող ժանրի զարգացման սեփական ավանդներով, այլև ազգային աննախադեպ շոկերով և, առաջին հերթին, Հայոց ցեղասպանությամբ ու հայրենագրկմամբ, դրսևորվեց որպես միանգամայն առանձնահատուկ երևույթ, ինչը երևակվեց ոչ միայն գրվածքների բովանդակային ու ձևական մասերով, այլև լեզվով՝ հոգով:

Խորհրդահայ հուշագրության համար շոկերից մի քանիսը, հատկապես Երկրորդ համաշխարհայինը, լայնորեն խրախուսվեցին որպես հուշագրության թեմա, ավելին՝ շատ օտարալեզու հուշագրություններ թարգմանվեցին արևելահայերեն: 20-րդ դարի կեսերից ցայսօր թարգմանվում են ցեղասպանության մասին հուշագրություններ: Չնայած ենթագիտակցական ջանքին՝ ժողովրդի պատմության՝ չհաղթահարված շոկերով էջը թերթելն անհնար եղավ հուշագրության հատուկում (ինչպես և ամբողջ 20-րդ դարի հայ գրականության համար), մանավանդ երբ այդ շոկերից շատերի (ցեղասպանություն, Կարսի մարզի և Սուրմալուի գավառի հանձնում Թուրքիային, Արցախի և Նախիջանի հանձնում Ադրբեջանին, երբևէ ամբողջությամբ չդատարկված Ուտիքի և Արցախի մեծագույն մասի, Բաքվի և անդրքուռյան տարածաշրջանի իսպառ հայաթափում) հետևանքները դեռևս գոյաբանական գործոն են ներկա կյանքում:

20-րդ դարի հայ հուշագրության ազգային կերպն իրենով մինչև վերջ չկարողացավ պայմանավորել 21-րդ դարի հայ հուշագրության ավանդների այն

հենքը, որում առավել ճշգրտված կլինեին ազգային կենսական արժեքները: 20-րդ դարի արժեքային շփոթահար դեգերումները, որոնք սուբյեկտիվի հետ միաժամանակ միանգամայն օբյեկտիվ պատճառներ ունեն, ժառանգվել են 21-րդ դարի հուշագրությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Литература русского зарубежья ("первая волна" эмиграции: 1920-1940 годы): Учебное пособие: В 2 ч. Ч. 1 / А.И. Смирнова, А.В. Млечко, В.В. Компанец и др. Под общ. ред. д-ра филол. наук, проф. А.И. Смирновой. - Волгоград: Изд-во "ВолГУ", 2003, С. 5.
2. Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Եր., Զանգակ-97, 2002, էջ 695:
3. Տերյան Վ., Երկեր (ՀԴԳ), Եր., Սովետական գրող, 1989, էջ 329:
4. Вестник МАНЭБ, СПб, 2011.- Том 16, N5, вып. 1, с. 27.
5. Литература русского зарубежья (1920–1940): Учебник для высших учебных заведений Российской Федерации / Отв. ред. Б.В. Аверин, Н.А. Карпов, С.Д. Титаренко / Учебно-методический комплекс по курсу «Литература русского зарубежья (1920–1940)». — СПб.: Филологический факультет СПбГУ, 2013, С. 9.

Մ.Գ. ԱՅՐԱՊԵՏՅԱՆ

НАЧАЛО ДИАСПОРАЛЬНОЙ И СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ МЕМУАРИСТИКИ

Армянская мемуаристика 20-го века, являясь в силу национальной судьбы продолжателем традиций, берущих начало с 5-го века, и находясь на орбите тенденций развития мировой мемуаристики, в то же время получила такой чисто национальный оттенок, который не присущ мемуаристике других народов. Имея единую внутреннюю неразрывную логику, она разделилась на советско-армянскую и диаспорально-армянскую мемуаристики.

Ключевые слова: мемуаристика, эмигрант, диаспорально-армянский, советско-армянский, национальная культура.

Մ.Ն. ՆԱՅՐԱՊԵՏՅԱՆ

THE BEGINNING OF DIASPORA AND SOVIET ARMENIAN MEMOIRISTICS

The Armenian memoiristics of the 20th century, by force of national destiny, being the successor of the traditions dating back to the 5th century and being in the orbit of the development trends of the world memoirs, at the same time, received such a purely national connotation that is not inherent to the memoiristics of other nations. Having a united internal inseparable logic, it separated into Soviet Armenian and Diaspora Armenian memoirs.

Keywords: memoirs, exile, Diaspora-Armenian, Soviet-Armenian, national culture.